



ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆԿԱՋԵՅՄԱՆ ՄԵՆԴԱՅԻ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ



«ԵՐԵՒԱՆԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ ԿԼԻՄԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ» ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

«Երեւանները փոփոխվող կլիմայի պայմաններում» կոալիցիան (CCC) հինգ առաջատար երեխայակենտրոն զարգացման և մարդասիրական կազմակերպությունների գործընկերություն է, որոնցից յուրաքանչյուրը հանձն է առել գիտելքներ փոխանցել, համակարգել և աշխատել երեխաների հետ՝ որպես փոփոխության միջնորդ, լիովին գիտակցելով վերջիններիս ցնցումներին և սթրեսորներին դիմակայելու կարողությունները: Կոալիցիայի մանդատն է սատարել և պաշտպանել երեխաների իրավունքները գլոբալ համաձայնագրերում: Կոալիցիայի անդամներն են՝ **CHILD FUND ALLIANCE, PLAN INTERNATIONAL, SAVE THE CHILDREN, UNICEF և WORLD VISION INTERNATIONAL** կազմակերպությունները:

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Նախ, հատուկ շնորհակալություն ենք հայտնում այն երեխաներին, ովքեր մասնակցեցին սույն գրքուկի փորձնական օրինակի մշակմանը, ինչպես նաև նրանց, ովքեր քարտկալեցին ու զորեղացրին այն իրենց մեկնաբանություններով ու առաջարկներով, ինչպես նաև ChildFund Ethiopia, Plan Philippines, Save the Children Mozambique և World Vision Ghana կազմակերպությունների գրասենյակներին, որոնք նպաստեցին վերջինիս իրականացմանը: Ի լրումն, շնորհակալություն այն անհատներին, ովքեր կարծիք հայտնեցին այս գրքուկի նախնական տարբերակի վերաբերյալ՝ Սոլեն Էդուարդին և Սառա Սթիվսոնին՝ ChildFund Alliance-ից, Խակոբ Օջարանին և Ալիսոն Ռայթին՝ Plan International-ից, Նիք Յոլին, Զըրգի Փեյթոլային և Ուելս Ուլոխիսին՝ «Մեյվ դը Չիլդրեն»-ից, Ջեյն Մ. Չունին և Էնթոնի Սպալթոնին՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ից, Սեդրիկ Յոյերեթին, Մեգի Իբրահիմին և Թիֆանի Թաո Ջոյներին՝ «Վոլըդ Վիժն»-ից:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք ուզում հայտնել «Աղետների Ռիսկի Նվազեցման Մենդայի գործողությունների շրջանակային ծրագիրը երեխաների համար մատչելի տարբերակով» գրքուկի հայերեն թարգմանության և խորհրդատվության համար ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտոր Համլետ Մաթևոսյանին, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտին, «ՕքսեՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամին: Գրքուկի հայերեն թարգմանությունը կատարվել է «Մեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ Եվրոպական Հանձնաժողովի քաղաքացիական պաշտպանության և մարդասիրական օգնության գործառնությունների գլխավոր վարչության (ԴԻՊԵԿՈ) կողմից ֆինասավորվող, «Աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված լավագույն փորձի՝ ինստիտուցիոնալացումը, կրկնօրինակումն ու տարածումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

ԳԼԱՎՎՈՐ ԽՍՐԱԳԻՐ՝ Ֆելիպե Կալա, ChildFund Alliance

ՀԵՂԻՆԱԿ՝ Յեյն Զըրնի

ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ /ՆԿԱՐՆԵՐԸ՝ Զատուխա Բլանկո և Մաջենթա Զրիեյեիվ Նեվելորես

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ Լուսինե Շահնազարյան

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԱՅՆ ԲՈՒՈՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ,

ՈՎՔԵՐ ՀՈԳ ԵՆ

ՏԱՆՈՒՄ ՄԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

ՆՐԱՆՔ ԵՆ ԻՍԿԱԿԱՆ


ԱՌԻՊԵՐ
ՀԵՐՈԱՆԵՐԸ



ԱՄԵՆ ՏԱՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԴԵՄՈԿՐԱՏԻԱԿԱՆ
ԴՊՐՈՅԻՆ



ՄԻԱՅՆ 2014 Թ.

**ԱՂԵՏՆԵՐԻ ԵՎ
ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ**

9 ՄԻԼԻՈՆ

**ԱՂՋԻԿ ԵՎ ՏՂԱ ՍՏԻՊԱՍԾ Է ԵՂԵԼ
ԹՈՂՆԵԼ ԳՊՐՈՅԸ:** ⁽²⁾

**ԵՐԵՒԱ ՏՈՒԺՈՒՄ Է
ԱՂԵՏՆԵՐԻՑ:** ⁽¹⁾

Դուք մեծերին շատ բան ունեք ասելու ձեզ շրջապատող հատուկ ռիսկերի և վտանգների մասին, ինչպես նաև ձեր մեծ ներդրումն ունենալու ճգնաժամից առաջ և հետո ընտանիքները, դպրոցներն ու համայնքներն ավելի ապահով դարձնելու գործում

Այն երեխաներն, ովքեր հասկանում են, թե ինչ են վտանգները, որոնց օժտում են լայն հնարավորություններով և լսում, կարող են մեծ դեր խաղալ իրենց անձնական պաշտպանության հարցում:

Երբ երեխաներին հնարավորություն է տրվում արտահայտվել և սահմանվում են իրենց կարիքների առաջնահերթությունները, աղետներից հետո նրանք նպաստում են երկարաժամկետ զարգացմանը և ավելի ապահով համայնքների ձևավորմանը:

Այս գրքույկն աղետների ռիսկերի նվազեցման մասին է, այսինքն՝ վտանգի՝ աղետ դառնալու հավանականությունը նվազեցնելու և աղետների ժամանակ վերջիններիս պատրաստվածության ուղղությամբ ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ մասին:

Աղետների ռիսկի նվազեցումը պետք է կատարվի կառավարության մակարդակով, ինչպես նաև տեղական համայնքներում և ընտանիքներում: Սա նշանակում է ներգրավել և լսել յուրաքանչյուրին. – երեխաներին և երիտասարդներին, հատկապես նրանց, ովքեր հաճախ անուշադրության են մատնվում:

Ողջ աշխարհում մարդիկ ավելի քաջատեղյակ են դառնում աղետների ռիսկի նվազեցման կարևորության մասին: Աշխարհն ավելի ապահով դարձնելու նպատակով 2015 թ. տարբեր երկրների կառավարություններ միասնական համաձայնության եկան 15-ամյա մի ծրագրի շուրջ, որը կոչվում է

**ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆ**

**ՍԵՆՂԱՅԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ,**

քանի որ հանդիպումը տեղի է ունեցել Ճապոնիայի Սենդայ քաղաքում: Այս գրքույկը կօգնի ձեզ և ձեր ընկերներին հասկանալ Սենդայի գործողությունների շրջանակային ծրագիրն, ինչպես նաև այն կարևոր դերը, որը դուք ունեք այդ ծրագիրն իրականություն դարձնելու գործում:


Նախքան ՄԵՆԴԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼԸ

այնուր Է ՀԱՍԿԱՆԱՆՔ,

Թե՛ հեղեղ եղ
Աղեհները,
Դիպեցերը եղ
ՎՏԱՆԳՆԵՐԸ:



ՈՎԲԵՐ ԵՆ
ԱՄԵՆԱԽՈՅԵԼԻՆԵՐԸ,
ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ
ԱՄԵԼՈՎ ԻՂՉ Ի ՆԿԱՏԻ
ՈՒՆԵՆՔ,
ԽԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՂՉ
ԿԱՊ ՈՒՆԵՆ ԱՅՍ
ԱՄԵՆԻ ՀԵՏ:



ԻՆՉ ԵՆ

ԱՊԵՏՆԵՐԸ

**ՆԱՅԵՔ ԶԵՐ ՀՈՒՐՋԸ ԵՎ ԿՏԵՍՆԵՔ, ՈՐ
ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԸՆԴՅԱՏ ՀԱՐԺՎՈՒՄ ԵՎ
ԺՈՓՈԽՎՈՒՄ Է: ԿԱԽՎԱԾ ԶԵՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ
ՎԱՅՐԻՅ՝ ԱՄԵՆ ՕՐ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՆՁՐԵՎ,
ԱՐԵՎ, ԶԱՄԻ ԿԱՄ ԶՅՈՒՆ ԼԻՆԻ: ԾԱՌԵՐՆ
ԸՆԿՆՈՒՄ ԵՆ, ԾՈՎԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ
ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԵՎ ԻՋՆՈՒՄ Է, ԻՍԿ
ԵՐԿՐԱՎՈՒՆԴԸ ՅՆՅՎՈՒՄ Է:**



ԻՆՉԷ ՎՏԱՆԳԸ

Վտանգը երևույթ է կամ գործընթաց, որը, եթե ծագի, կարող է վնասել մարդկանց, նրանց ունեցվածքը և շրջակա միջավայրը,

Գոյություն ունեն վտանգների տարբեր տեսակներ: Որոշները, ինչպիսիք են երկրաշարժերը, փոթորիկները, հրաբուխները, ջրհեղեղները, երաշտները և սողանքները, բնական են:

Մյուսները կարող են լինել տեխնածին կամ մարդածին վտանգեր, որոնք առաջանում են մարդկանց պատճառով: Սրանց թվում են նաև աղտոտումը և ճանապարհատրանսպորտային պատահարները

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2 ԲՆԱԿԱՆ, ԹԵ՛՝ ՄԱՐԴԻԱԾԻՆ

(Տես նկարները)



ՀԿԱՐԴՆԵՐԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՅՐԵՔ



ՑՈՒՀԱՄԻ

ՍՈՎՈՐԱԲԱՐ ՀՐԱԲԽԱՅԻՆ ԿԱՄ ՍԵՅՍՄԻԿ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՕՎԿԻԱՆՈՍԻ ՀԱՏԱԿԻՆ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԱՎԱՅԱԿԱՆ ԱՒԷ, ՈՐՆ Ի ՎԵՐՁՈՒ ԲԱՆԱԿՈՒՄ Է ԱՓԻՆ: ՀԱՄԱՅՆՔԻ ՎՐԱ ԹՈՂԱԾ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԿՈՐԵՍԱՐԱՐ ԼԻՆԵԼ:

ՀԱՐԱՃԱՐԱԿ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ՏԱՐԱԾՈՒՄ ԲԱԶՄԱԹԻՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՐՁԱՆՈՒ:

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ (ՀԱՅՏՆԻ ԵՆ ՆԱԵՎ ԹԱՅՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԶԻԿՆՈՆՆԵՐ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ) ԿԱՆՎԱԾ ԶԵՐ ԲԵՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՑ: ԱՍԵՆԱՌԺԵՐ ԱՐԵՎԱԳԱՐԶԱՅԻՆ ՓՈԹՈՐԻԿՆԵՐԸ, ՈՐՈՍԷ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ:



ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒ ՑՆՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՏԱՆՈՒՄՆԵՐ:

ԵՐԱՇՏՆԵՐ

ԵՐԲ ԵՍՏ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՁՐԵՎ ԶԻ ԳԱՒԽՍ, ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՐԻ ԼՈՒՐՁ ՊԱԿԱՄ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ: ՎԵՐՁԻՆՆԵՐՍ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ՆԱԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ՕՐԻՆԱԿ՝ ԳԵՏԻ ՎԵՐԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՎՐԱ ՊԱՏՎԱՐԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ԵՐԱՇՏԻ ՊԱՏՃԱՐ ԴԱՆՆԱԼ ՍՏՈՐԻՆ ՀՈՍԱՆՔՈՒՄ ԱՐՈՂ ԳՅՈՒՂԱՑԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

ԺԱՆՏԱԽՍ

ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՆՆՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ՎՏԱԳԱԿՈՐ ՍՈՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՄ՝ ԲԱՐՁՐ ՎԱՐԱԿԵԼԻՈՒԹՅԱՆ և ՄԱՅՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍԻ ՊԱՏՃԱՌՈՎ:



ՀԵՂԵՂՆԵՐ

ԵՐԲ ԳԵՏԸ ԴՈՒՐՄ Է ԳԱՒԽՍ ԱՓԵՐԻՑ, ԵՎ ԶՈՒՐԸ ԾԱԾԿՈՒՄ Է ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐ:

ԶՆԱՀՅՈՒՄԵՐ

ԵՐԲ ԶՅԱՆ ՍԵՐ ԶԱՆԳԱՄԱԿՈՒՄ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԳԱՀԱԿԻԺՈՒՄ Է ՆԵՐՔԵՎ:

ՏԵԽՆԱԾԻՆ ՎՏԱՀԳՆԵՐ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՏԱԳ, ՕՐԻՆԱԿ՝ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՅՈՒՆ, ԶԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՍԷ ԿԱՄ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԺԱՌԱԳԱՅՅՈՒՄ:



ԱՆԼԱՎՆԵՐ

ՄՐԸՆԹԱՑ ԶԵՆԱՏՐԱՅԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

ՍՈՂԱՆՔՆԵՐ

ԵՐԲ ՀՈՂԻ ՍԵՐ ԶԱՆԳԱՄ ԶԱՆԿԱՐԾ ՄԱՅՈՒՄ Է ՆԵՐՔԵՎ:

ՀՊԱԲՈՒՄՆԵՐ

ԵՐԲ ՄԱԳՍԱՆ ՀԱՄԱՆՈՒՄ Է ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՎ ԼԱՎԱՅԻ ԵՎ ՍՈՒՐԻ ԺԱՅԹԵՐՈՒՄՆԵՐ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՊԴԵՀ

ԵՐԲ ԱՆՏԱՌՈՒՄ ՀՊԴԵՀՆ ԱՆՎԵՐԱՅԱԿԵԼԻ Է ԴԱՆՆՈՒՄ:



ԻՆՉՊՈՏԻՍ ՏԵՄԼՈՒՄ ԵՔ,

**ՈՐՈՇ ՕՐԻՆԱԿՆԵՐ
ԱՅՂՔԱՆ ԷԼ ՀՍՏԱԿ ՉԵՆ:**


**ՄԵՆՔ ԱՍՈՒՄ ԵՆՔ, ՈՐ
ԶՐՀԵՂԵՂԸ ԲՆԱԿԱՆ Է,**

ՍԱԿԱՅՆ ԵՐԲԵՄՆ ԳՅՈՒՂԸ ՀԵՂԵՂՎՈՒՄ Է,
ՈՐՈՎԶԵՏԵՎ ՄԱՐԴԻԿ ԻՐԵՆՅ՝ ԱՂԲԸ ԹԱԹՈՒՄ
ԵՆ ՎԵՐԻՆ ՀՈՍԱՆՔՈՒՄ ԿԱՄ ԷԼ ԿՏՐՈՒՄ
ԾԱՌԵՐԸ:



**ՄԵՆՔ ԱՍՈՒՄ ԵՆՔ, ՈՐ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀԸ
ԲՆԱԿԱՆ Է,**

ՍԱԿԱՅՆ ԱՅՆ ԿԱՐՈՂ Է ԱՌԱՋԱՆԱԼ,
ԵՐԹ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿՆ ԱՆՏԱՌՈՒՄ
ԾԽԱՆՈՏ ՆԵՏԻ:



Ինչո՞րտիս՝ ՎՏԱՆԳՆԵՐ ԵՆ
ԽՐԵՀԱԾԱՏԵ ՀԱՆԴԻՊՈՒՄ
ՁԵՐ ՏԱՐԱԾՔՈՒՄ:



ԽԱԴ

ԳՏԵ՛Ք

ՎՏԱՆԳՆԵՐԸ

ԲԱՌԱԽՈՒՅԶ-

ԳԼՈՒԽԱԿՏՐՈՒԿՈՒՄ:

ԶԱՀՅՈՒՄ

ԵՐԱՇՏ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

ՀԱՄԱՃԱՐԱԿ

ՊԱՅԹՅՈՒՆ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՒԵՀ

ԶՐՀԵՂԵՂ

ՓՈԹՈՐԻԿ

ՍՈՂԱՆՔ

ՍԵԼԱՎ

ԺԱՆՏԱԽՏ

ՅՈՒՆԱՄԻ

Ա	Ա	Ա	Պ	Ծ	Ք	Ն	Լ	Գ	Ա
Ն	Չ	Ք	Թ	Դ	Ֆ	Գ	Ի	ՈՒ	Ր
Տ	Գ	Ե	Ն	Յ	Մ	Ք	Լ	Ր	Ս
Ա	Ջ	Ր	Հ	Ե	Ղ	Ե	Ղ	Ա	Ե
Ո	Տ	ՈՒ	Է	Վ	Փ	Ր	Յ	Ս	Ն
Ա	Հ	Օ	Ր	Հ	Ծ	Վ	Է	Վ	Օ
Յ	Ժ	Շ	Ա	Ա	Պ	Ր	Ա	Ժ	Ք
Ի	Ա	Խ	Շ	Ձ	Ն	Ա	Հ	ՈՒ	Ս
Ն	Ն	Գ	Ե	Ր	Ա	Շ	Տ	Ծ	Ո
Յ	Տ	ԵՎ	Ս	Ե	Լ	Ա	Վ	Ֆ	Ղ
Հ	Ա	Մ	Ա	Ծ	Ա	Ր	Ա	Վ	Ա
Ր	Ղ	Շ	Ր	Ֆ	Ժ	Ժ	Ծ	Ա	Ն
Դ	Տ	Ր	Յ	ՈՒ	Ն	Ա	Ս	Ի	Ք
Ե	Դ	Փ	Ո	Թ	Ո	Ր	Ի	Վ	Յ
Հ	Մ	Լ	Վ	Ձ	Ա	Ա	Պ	Թ	Փ

ԻՆՉ Է ԱՂԵՏԸ

Վտանգը կարող է վերածվել աղետի, բայց ոչ միշտ.
մի բանի բան պետք է միաժամանակ կատարվի:
Եկեք դիտարկենք սելավի օրինակը.

- 1 **ՄԱՐԴԻԿ ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՅՑՆԵՐԸ
ՎՏԱՆԳԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՄՈՏ,**
օրինակ՝ հրաբխի ստորոտին, տղմոտ և
անկայուն լանջին կամ հենց ծովափին:
- 2 **ՎՏԱՆԳ Է ԱՌԱՅԱՆՈՒՄ,**
երբ, օրինակ, հորդառատ անձրևներին
հետևում են երկրաշարժեր, ինչն էլ
հանգեցնում է սողանքի:
- 3 **ՎՏԱՆԳԸ ՎԵՐԱԾՎՈՒՄ Է ԱՂԵՏԻ՝ ՄԵԾ ՎՆԱՍՆԵՐ
ՊԱՏՃԱՌԵԼՈՎ ՄԱՐԴԿԱՆՅՑ ԵՎ ՆՐԱՆՅՑ
ՈՒՆԵՅՎԱԾՔԻՆ:**



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3

Նայեք նկարին:
Վտանգի՝ աղետի
վերածվելու հավանակա-
նությունը նվազեցնելու
համար մարդիկ ինչ կարող
էին անել:
(Տես նկարները)

ԱՅՍԴԻՍՈՎ, ԱՂԵՏՆԻ

ԻՍԿԱՊԵՍ ՎԱՏ ԵՐԵՎՈՒՅԹ Է,

որի ժամանակ բազմաթիվ մարդիկ վիրավորվում կամ մահանում են, իսկ նրանց ունեցվածքը վնասվում կամ ոչնչացվում է: Աղետի ժամանակ, տեղական իշխանությունները հաճախ չեն կարողանում ինքնուրույն հաղթահարել այն: Կառավարությունները և տեղական իշխանությունները պարտավոր են աջակցել մարդկանց, երբ վրա է հասնում աղետը: Մարդկանց հաճախ անհրաժեշտ է լինում նաև հարևանների և այլ վայրերում կամ երկրներում ապրող ընկերների օգնությունը: Նման դեպքում մենք ասում ենք, որ համայնքը հատել է իր ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ սահմանները: ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ասելով ի նկատի ունենք համայնքի այն բոլոր ուժերը, ռեսուրսներն ու գաղափարները, որոնցով մարդիկ պետք է պաշտպանեն իրենց և իրենց ունեցվածքը

ԱՂԵՏԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4

Դիտարկենք սովորական հրդեհային վտանգի օրինակ ձեր տարածքում: Վտանգի՝ աղետի վերածվելու հավանականությունը նվազեցնելու համար մարդիկ ինչ կարող են անել: (Տես նկարները)



ԻՆՉ Ե ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ հանգամանքներ ստիպում են մարդկանց, համայնքներին, քաղաքներին կամ երկրներին ավելի հաճախ տուժել վտանգի կործանարար հետևանքներից, քան մյուսները: Հենց սա էլ անվանում ենք **ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ**:

Մարդիկ կարող են խոցելի լինել մեկ կամ մի խումբ պատճառներով: Օրինակ՝ ծեր, հիվանդ, հղի լինելը կամ հաշմանդամություն ունենալը ձեր համայնքի որոշ մարդկանց ավելի խոցելի է դարձնում: Անտառային հրդեհի ժամանակ դուք հավանաբար ձեր տատիկից ավելի արագ կվազեք: Մարդիկ կարող են հատկապես խոցելի լինել, երբ չեն կարողանում կարողալ նախագգուշացնող ցուցանակները կամ հասկանալ ռադիո-հաղորդագրությունները: Անմիջապես գետի մոտ վատ կառուցված շենքերում, ինչպես նաև նոր վայրում ապրելը, որտեղ անծանոթ եք տեղանքին կամ չգիտեք լեզուն, կարող է ձեզ խոցելի դարձնել:

Ամենաաղքատ մարդիկ սովորաբար ամենախոցելի են: Օրինակ՝ նրանք չունեն իրենց ապրելու վայրն ընտրելու հնարավորություն, քանզի վերջիններս պետք է մոտ լինեն իրենց աշխատավայրին, կամ չեն կարող իրենց թույլ տալ ավելի ամուր շինանյութերով տներ կառուցել: Բացի այդ, նրանց հաճախ չեն սովորեցնում, թե ինչպես կանխարգելել վտանգի՝ աղետի վերածումը կամ թե ինչպես արձագանքել, երբ վրա է հասնում աղետը: Ոստիկանությունը, հրշեջ ծառայությունը և կառավարությունները շատ կարևոր դեր ունեն խոցելի մարդկանց՝ նման վտանգի ենթարկվելու հավանականությունը նվազեցնելու գործում:

ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ մասին խոսելիս ի նկատի ունենք վտանգի գոտում ռիսկերի ենթարկվող մարդկանց քանակն ու ունեցվածքը: Այնպիսի գործոնները, ինչպիսիք են կլիմայական փոփոխությունը և բնակչություն հաստատելու նպատակով ավելի շատ մարդկանց հոսքը դեպի որևէ վայր, կարող են բարձրացնել վտանգի ենթարկվելու հավանականությունը:



ԻՆՉՊԵՆ ՏԵՄԼՈՒՄ ԵՔ,

խոցելիության որոշ տեսակներ կարող են կանխվել, մինչդեռ մյուսները՝ ոչ:

Կարևոր է մտածել, թե ովքեր են խոցելի ձեր համայնքում, որպեսզի կարողանաք օգնության ձեռք մեկնել նրանց:

Համայնքը, որտեղ մարդիկ հավաքվում և միասին աշխատում են, խոսում համայնքի առջև ծառացած վտանգների մասին, ավելի քիչ խոցելի է աղետների նկատմամբ, քան այն համայնքը, որտեղ չեն քննարկվում հնարավոր վտանգները, կամ մարդիկ անուշադրության են մատնվում:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5

Մտածեք ձեր համայնքի մասին: Ովքեր են ամենախոցելիները: Պատկերացրեք, որ ստանում եք SMS նախազգուշացում գալիք հեղեղի մասին: Ի՞նչ կանեիք խոցելի մարդկանց պաշտպանվածությունն ապահովելու համար: (Տես Նկարները)

ԴԻՎԱԿԸ

ԴԻՎԱԿԸ ՎՏԱՆԳԻՑ ԱՂԵՏԻ ՎԵՐԱԾՎԵԼՈՒ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է:

Միշտ չէ, որ կարող ենք կանխարգելել վտանգները:
Սակայն կարող ենք նվազեցնել վտանգների՝
աղետների դառնալու հավանականությունը.

ահա թե ինչ է իրենից ներկայացնում աղետների ռիսկի
նվազեցումը: Օրինակ՝ մենք կարող ենք կառուցել որոշակի
ծևով կամ որոշակի նյութերով, որոնց շնորհիվ փոթորկի
ժամանակ տների և դպրոցների փլուզման
հավանականությունը կնվազի, կամ կարող ենք կանգնեցնել
ծառահատումները՝ այսպիսով նվազեցնելով սողանքների
հավանականությունը:

Աղետների ռիսկի նվազեցումը նաև երկարաժամկետ կամ
այսպես կոչված ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ աջակցություն է ցուցա-
բերում համայնքներին և երկրներին: Օրինակ՝ գետը, որը մաքուր
է պահվում, քանի որ մարդիկ իրենց աղբն այնտեղ չեն նետում,
քիչ հավանական է, որ գյուղում մեծ հեղեղ կառաջացնի: Բացի
այդ, սա նաև լավ է երկարաժամկետ առումով, քանի որ խմելու,
եփելու, լվացվելու նպատակով օգտագործվող մաքուր ջուրն
ավելի առողջարար է մարդկանց համար, իսկ գյուղացիների
համար ուտելու և շուկայում վաճառելու համար շատ ձուկ կլինի:




ԽԱՂ

ՏԱՌԻԵՐԸ ԴԱՍԱԿԱՎՈՐԵ՛Ք ՃԻՇՏ շԵՐԹԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆՔ:

ՀՈՒՇՈՒՄ.

ԻՆՅՆ Է ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ ԲԱՅՄԱԹԻՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԽՈՅՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԻ ԷՐՈՅԻՍՅՈՒՄՆԵՐԻ ՍԵՆՎՈՒՄԸ
ԵՎ ՇԵՐԹՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԸ:



ԱՅԺՄ, ԵՐԲ ԴՈՒՔ ԳԻՏԵՔ

ՎՏԱՆԳՆԵՐԻ,
ԱՂԵՏՆԵՐԻ,
ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ
ԵՎ ՌԻԱԿԻ ՄԱՍԻՆ,

ՄԵՆԷ ԿԱՐՈՂ ԵՆԷ ԽՈՍԵԼ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻԱԿԻ
ՆՎԱԶԵՅՄԱՆ
ՍԵՆԴԱՅԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
մասին

ԻՆՉԻՂԱՄԱՐ Է ԱՅՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ

ՍԵՆԴԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԸ ԿԻՐԱՌԵԼԻ Է ԲՈԼՈՐ
ՏԵՍԱԿԻ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Այն նաև
վերաբերում է բոլորին՝ ազգային և տեղական
իշխանություններին, համայնքներին և
ընտանիքներին ամենուր՝ ողջ աշխարհով մեկ: Ոչ
միայն իշխանություններն ու ղեկավարները, այլև
յուրաքանչյուր ոք մարդկանց պաշտպանելու գործում
կարևոր պատասխանատվություն է կրում:
Համախմբված համայնքները, որտեղ բոլորը լսում և
հոգ են տանում միմյանց մասին, ավելի քիչ խոցելի են
աղետների նկատմամբ և ավելի դիմակայուն են
լինում, երբ վրա է հասնում աղետը:



ՈՐՆ Է

ՀՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՆՂԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՑ առաջ գոյություն ունեւ
աղետի պատճառած կորուստները նվազեցնելուն
ուղղված մեկ այլ միջազգային ծրագիր՝ ՀՅՈԳՈՅԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ:

Այն 2005 թ. մշակվել և համաձայնեցվել է
կառավարությունների, միջազգային
գործակալությունների, աղետների կառավարման
փորձագետների և այլոց կողմից 2004 թ.
Հնդկական օվկիանոսում տեղի ունեցած ցունամիից
հետո: Սենղայի գործողությունների շրջանակային
ծրագիրը հիմնվում է այս լավ գաղափարների վրա
և ներմուծում նոր կարևոր գաղափարներ:

ԱՌԱՋԻՆ

Ի տարբերություն աղետների կառավարման՝ այն հատկապես
կարևորում է աղետների ՌԻՍԿԻ կառավարումը: Ինչպես
գիտենք, պարտադիր չէ, որ վտանգը վերածվի աղետի. ռիսկը
դրա հավանականությունն է: Ուստի, ռիսկերին և դրանց
նվազեցման եղանակներին մեծ ուշադրություն դարձնելն
առաջին հերթին լավ միջոց է վտանգի՝ աղետի վերածումը
կանխելու համար:

ԵՐԿՐՈՐԴ

ՍԵՆՂԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐԸ հստակ սահմանում է 7 գլոբալ թիրախ և հետևում
վերջիններիս իրագործման առաջընթացին:

ԵՐՐՈՐԴ

ՍԵՆՂԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐԸ վերաբերում է վտանգների ավելի լայն շրջանակի:
Ինչպես գիտենք, վտանգները կարող են լինել բնական կամ ոչ
բնական և մենք պետք է մտածենք բազմատեսակ հնարավոր
վտանգների մասին: Սենղայի գործողությունների շրջանակային
ծրագիրը վերաբերում է նաև առողջությանը և կրթությանը՝
որպես դիմակայունության կարևոր բաղադրիչ: Հոգալ այն
մասին, որ վտանգից առաջ մարդիկ ձեր համայնքում առողջ և
իրազեկված լինեն և իմանան, թե ինչպես պահպանել
առողջությունը և ստանալ տեղեկատվություն, նշանակում է
նվազեցնել նրանց խոցելիությունը:

ՉՈՐՐՈՐԴ

ՍԵՆՂԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐԸ ուշադրություն է դարձնում ծրագրի իրագործման
ապահովման հարցում յուրաքանչյուր մարդու դերին, որը նա
պետք է ստանձնի: Սա չի վերաբերում միայն
կառավարություններին և տեղական առաջնորդներին, ովքեր
գիտեն իրենց անելիքը: Աղետների ռիսկի նվազեցումը բոլորի
գործն է:

ՈՐՐՆ Է ՁԵՐ ԿԵՐԸ



Ամբողջ աշխարհում 18 տարեկանից ցածր 2.2 միլիարդ մարդ է ապրում (3): Մեծերը պետք է լսեն ձեզ: Փորձը ցույց է տալիս, որ երեխաները յուրօրինակ գիտելիքներ և գաղափարներ ունեն համայնքում առկա ռիսկերի և դրանց արձագանքման միջոցների մասին: Անկախ այն բանից, թե ով եք և որտեղ եք գտնվում, դուք լաված լինելու և ձեր կյանքի վրա ազդող որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք ունեք: Երբ երեխաները աղետների ռիսկի նվազեցման կիզակետում են՝ խմբերով կամ անհատապես, միջոցառումներն իրականացվում են երեխաների համար և երեխաների կողմից: Աղետների ռիսկի երեխայակենտրոն նվազեցումը կարող է բազմաթիվ կարևոր իրավունքների իրագործման հնարավորություն ընձեռնել, այդ թվում՝ ձեր կյանքի, կրթության և առողջության իրավունքները: Կառավարությունները, գործակալությունները և ձեր համայնքի մյուս մեծահասակները պետք է լսեն ձեր տեսակետը, որպեսզի դուք ավելի լավ պաշտպանված լինեք, իսկ ձեր եռանդը, գիտելիքներն ու գաղափարները կարողանան օգտակար լինել բոլորին:

ԻՆՉ Է ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ՍԵՆԴԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ

Երբ ծրագիրն իրագործվի ձեզ պես մարդկանց կողմից, ավելի քիչ աղետներ կպատահեն: Եթե նույնիսկ վտանգը փոխվի աղետի, այն այդքան ծանր չի լինի և մարդիկ ավելի արագ կվերականգնվեն: Եվ որ ամենակարևորն է, հետագա աղետներն ավելի քիչ կյանքեր, աշխատանքներ կխլեն և ավելի քիչ վնաս կհասցնեն գյուղացիական տնտեսություններին, տներին, առողջությանը և շրջակա միջավայրին: Սա կնշանակի՝ աղետներն այնքան էլ լուրջ և թանկ երկարաժամկետ ազդեցություններ չեն ունենա բոլորի վրա:

ՈՐՆ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀՊԱՏԱԿԸ

Ընդհանուր նպատակն առկա ռիսկի նվազեցումն ու նոր ռիսկի կանխարգելումն է (Հիշում ե՞ք՝ ռիսկը վտանգից աղետի վերածվելու հավանականությունն է): Այն կիրականացվի ծրագրի շրջանակներում՝ ուշադրություն դարձնելով այն ամենին, ինչը պետք է փոխել մարդկանց կյանքի տարբեր բնագավառներում, որպեսզի վերջիններս ավելի քիչ վտանգների ենթարկվեն և պակաս խոցելի լինեն աղետների նկատմամբ, իսկ վտանգի պահին ավելի պատրաստված լինեն: Այս ամենը նշանակում է, որ մարդիկ կդառնան ավելի ԴԻՄԱԿԱՅՈՒՆ՝ ավելի զորեղ և ճկուն, որպեսզի կարողանան արագ վերականգնվել, երբ որևէ ահավոր դեպք տեղի ունենա: Ճիշտ այնպես, ինչպես արմավենու ծառն է ճկվում ուժեղ քամու ժամանակ, իսկ այնուհետև ուղղվում:



7 ՀԱՏԱԿ ԹԻՐԱԿԱ

ԹԻՐԱԽՆԵՐՆ ԱՅՆ ԵՆ, ԻՆՉԻՆ ՄԵՆՔ ՄԻԱՍԻՆ
ՉԳՏՈՒՄ ԵՆՔ ՀԱՍՆԵՆ: ԴՐԱՆՔ ՄԵՉ ԹՈՒՅՆ ԵՆ
ՏԱԼԻՍ ՀԵՏԵՎԵՆ ՇՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ
ԱՌԱՋԸՆԹԱՅԻՆ:



ԹԻՐԱՆ

1

Աղետների դեպքում
նվազեցնել
մարդկային զոհերի
թիվը: Մենք
կհետևենք ծրագրի
առաջընթացին՝
հոգալով, որ 2005-
2015 թթ. համեմատ
2020-2030 թթ.
յուրաքանչյուր
100,000 մարդկանց
թվում ավելի քիչ զոհ
լինի:

ԹԻՐԱՆ

2

Ողջ աշխարհում
ծրագիրը նպատակ
ունի կրճատել
աղետների
հետևանքով տուժած
մարդկանց թիվը:
Դարձյալ կարող ենք
հետևել ծրագրի
առաջընթացին՝
հաշվարկելով 2010-
2030 թթ. տուժած
մարդկանց թիվը
2005-2015 թթ.
համեմատ:

ԹԻՐԱՆ

3

Կրճատել աղետների
արձագանքելու և
դրանց պատճառած
հետևանքների
վերացման վրա
ծախսվող գումար-
ներն ու աղետների
հասցրած տնտե-
սական վնասը,
երբ, օրինակ, մարդիկ
կորցնում են աշխա-
տանքը կամ խանութ-
ները սնանկանում են:



ԹԻՐԱՆ

4

**ԿՐՃԱՏԵԼ ԱՂԵՏՆԵՐԻ՝ ՇԻՄՆԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՍ
ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻՆ
ՊԱՏՃԱՌԱԾ ՎԵՍԱԸ,**

ինչպիսիք են դպրոցները,
հիվանդանոցները,
երկաթգծերը և գլխավոր
ճանապարհները: Այս
ամենը կիրառորձենք
վերջիններիս
դիմակայունության
բարձրացման միջոցով,
օրինակ՝ հետևելով, որ
բոլոր դպրոցները
մինչև 2030թ.
կառուցվեն կայուն
հիմքի վրա՝
օգտագործելով ամուր
շինանյութեր:



ԹԻՐԱՆ

5

Մինչև 2030թ.
ավելացնել աղետների
ռիսկի նվազեցման
ազգային և տեղական
ռազմավարություններ
ունեցող երկրների
թիվը:

ԹԻՐԱՆ

6

Աջակցել երկրներին միասին
աշխատել վտանգների՝
ռիսկերի վերածումը
կանխարգելելու
ուղղությամբ: Օրինակ, եթե
ճապոնիայում մարդիկ
երկրաշարժերին
դիմակայելու համար շենքերն
ավելի անվտանգ դարձնելու
հրաշալի գաղափարներ
ունեն, նրանք այդ
գաղափարներով պետք է
կիսվեն Նեպալի ժողովրդի
հետ, որպեսզի վերջիններս
կարողանան հետևել նույն
օրինակին: Եթե Սենթ
Լուսիայում մարդիկ գիտեն,
թե ինչպես մշակաբույսերի
միջև հատուկ առուներ
փորել, որպեսզի սելավներ
առաջացնելու փոխարեն
հորդառատ անձրևները
դուրս հոսեն, ապա նրանք
այս գաղափարներով պետք է
կիսվեն Գվատեմալայի
ժողովրդի հետ:

Ավելացնել այն մարդկանց թիվը, ովքեր կարող են մուտք գործել և հասկանալ վաղ ազդարարման համակարգերը: Սա նշանակում է, որ մարդիկ պետք է համագործակցեն և կիսվեն տեղեկատվությամբ: Եթե, օրինակ, որևէ կղզում մարդիկ գիտեն գալիք թայֆունի մասին, նրանք պետք է ռադիոյով, հեռուստատեսությամբ և սոցիալական լրատվամիջոցներով տարածեն այս տեղեկատվությունը:




ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 4 ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

1

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԸՆԿԱՆՈՒՄԸ

ՍԵՆՂԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ՆԱԿԱՏԱԿՆ ԱՅՆ Է, ՈՐ ձեզ ՆՄԱՆ ՄԱՐՈՒԿ
ՀԱՍԿԱՆԱՆ, ԹԵ ԻՆչ ԵՆ ԱՂԵՏՆԵՐԸ, ՎՊԱՆԳՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ և
ԽՈԳԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ: Սա բՈՒՐՈՐԻՆ ԿՕԳՆԻ ՏԵՂՈՒՄ ԲԱԾԱԽԱՅՈՒՄԸ
ՎՊԱՆԳՆԵՐԸ, ՆԱԽԱԿԱՏՐԱՍՏՎԵԼ ԴՐԱՆՍ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ
ՎՊԱՆԳՆԵՐԻ՝ ԱՂԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ և ԱԿԱԽՈՎԵԼ ԻՐԵՆՑ
ՍԵՓԱԿԱՆ ԱՆՃԻ, ՈՒՆԵԳՎԱԾՔԻ և ՄՅՈՒՍՆԵՐԻ
ԱՆՎՊԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ:



2

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶՈՐԵՂԱՅՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Երբ խոսքը գնում է աղետների մասին, ՍԵՆԴԱՅԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐԸ նպատակ ունի ապահովել տեղական
առաջնորդների, կառավարությունների,
ղեկավարների և միջազգային գործակալությունների
ավելի լավ կազմակերպվածությունը: Նրանք բոլորը
պետք է ունենան հստակ ծրագրեր և սահմանված
աշխատանքային ընթացակարգեր, որպեսզի
կանխարգելեն աղետները և արձագանքեն, երբ
աղետը վրա հասնի:



3

ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿՐՋԱՏՄԱՆ ՄԵՋ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՍԵՆՂԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ նպատակն է հոգալ
այն մասին, որ բավականաչափ գումար ծախսվի
աղետների ռիսկի նվազեցման համար թե՛
պետական (օրինակ՝ կառավարությունները), թե՛
մասնավոր դերակատարների կողմից (օրինակ՝
ընտանիքները, բիզնեսները): Ծրագիրն
ընդունում է, որ դա գումարը երկարաժամկետ
ծախսելու լավ եղանակ է, քանի որ այն
նպաստում է կայուն զարգացմանը: Օրինակ՝
իսկապես որակյալ և ամուր շինանյութերից նոր
դպրոց կառուցելը կարող է մի փոքր ավելի
թանկ արժենալ, այնուամենայնիվ, երկրաշարժի
ժամանակ ամուր դպրոցը կանգուն կմնա,
հետևաբար՝ դուք բաց չեք թողնի ձեր
կրթությունը, դպրոցը ստիպված չեն լինի
վերակառուցել, իսկ ողջ պետության վիճակը
կբարելավվի երկարաժամկետ հեռանկարում:



4 ԱՂԵՏՆԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ


ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ
ԵՎ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՎԵՐԱԿԱՆՔՆՄԱՆ,
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՈՒ
ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ

ՍԵՆԴԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԿԱՏԱԿՆ Է
ԱՊԱԽՈՎԵԼ յՈՒՐԱՔԱՆՅՈՒՐԻ
ԱԿԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՈՒՄՆԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ,
ՈՐԱԿԵՍՈՒՄ ԱՐԺԱԳԱՆՔՈՒՄՆ ԱՎԵԼԻ ԱՐՊՅՈՒՆԱՎԵՏ ՈՒ
ԼԱՎ ԿԱԳՄԱԿԵՐԱՎԱԾ ԼԻՆԻ: ՄԻՆՉ ըՆՏԱՆԻՔՆԵՐԸ,
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ և ԵՐԿՐՆԵՐԸ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՆ ԱՂԵՏԻ
ԱԿԱՏՈՃԱԾ ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԵՆՈՂԱՅԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ շՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
ՆԱԿԱՏԱԿ ՈՒՆԻ ՀԱՉՈՐԴ ԱՆԳԱՄՎԱ ՀԱՄԱՐ ՕԳՆԵԼ
ՆՐԱՆՉ ԱՎԵԼԻ ԱՐՊՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱԿԱԾՈՒՄԵԼ:




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6

1. Նկարե՛ք ռիսկի բարտեզներ վտանգի տեղը նշելու համար:
2. Օգնե՛ք համայնքի մյուս անդամներին հասկանալ ռիսկերը և ապահովե՛ք ձեր անվտանգությունը:
3. Պահպանե՛ք բնությունը (Տեն Նկարները):



ԱՅՑՄ ՁԵ՛Ր ՀԵՐԹԵՆ Է



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(1) Վերքթեր, Մակքինոն և այլն (2008 թ., The humanitarian costs of climate change (Medford, MA: Feinstein International Center).

(2) «Սեյվ դը չիլդրեն» (2014 թ.), No child left behind: Barriers to education in the Asia-Pacific region.

(3) ՅՈՒՆԻՍԵՖ (2014 թ.), The state of the world's children 2014 in numbers: Every child counts.

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Movimiento Mundial por la Infancia de Latinoamrica y el Caribe (2015),

The world we want: A young person's guide to the Global Goals for Sustainable Development.

ՀԱՍԱՆՆԵԼԻ Է <http://sustainabledevelopment.un.org> կայքում:

ՅՈՒՆԻՍԵՖ (առանց ամսաթվի),

The little book of children's rights and responsibilities.

ՀԱՍԱՆՆԵԼԻ Է <http://www.unicef.org> կայքում:

ՅՈՒՆԻՍԵՖ և այլն (առանց ամսաթվի),

The Convention on the Rights of the Child in child-friendly language.

ՀԱՍԱՆՆԵԼԻ Է <http://www.unicef.org> կայքում:

ՅՈՒՆԻՍԵՖ (առանց ամսաթվի),

United Nations Secretary-General's study on violence against children adapted for children and young people.

ՀԱՍԱՆՆԵԼԻ Է <http://www.unicef.org> կայքում:

ԱՅԺՄ

ԿՈՒՔ

ԿԱՐՈՂ ԵՔ ԿԻՍՎԵԼ
ԳԻՏԵԼԻՔԻ ՀՉՈՐ ՈՒԺՈՎ ԵՎ
ՍՈՎՈՐԵՅՆԵԼ ՁԵՐ
ԸՆԿԵՐՆԵՐԻՆ,
ԸՆՏԱՆԻՔԻՆ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԻՆ

ԱՂԵՏՆԵՐԻ
ՌԻՍԿԻ
ՆՎԱԶԵՅՄԱՆ
ՄԱՍԻՆ